MEASURE Evaluation

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔ

Լրատու Մարտ 2019

Ծանոթագրություն MEASURE Evaluation-ի կողմից

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Երեխաների այլընտրանքային խնամք» ամսագրի 3-րդ համարը: Այս համարը պարունակում է տեղեկատվություն 2018թ. հոկտեմբերից մինչ օրս տարբեր երկրներում իրականացված գործողությունների վերաբերյալ, մասնվորապես՝

- Երկրների այլընտրանքային խնամքի համակարգի բարեփոխումների մասնակցային ինքնագնահատման արդյունքների կիրառում
- Մշտադիտարկմանն ու գնահատմանը (ՄԳ) ուղղված մենթորական գործունեություն
- Դիտարկումներ ընտրված երկրներում իրականացված մարզային այցելություններից, որը թույլ կտա հասկանալ տվյալների որակի և կիրառման հետ կապված դժվարությունները:
- Նորություններ տեղեկատվական համակարգերի աշխատանքի վերաբերյալ:

Գնահատման արդյունքների կիրառման առաջընթացը

Հայաստանում, Գանայում, Մոլդովայում և Ուգանդայում իրականացված Այլընտրանքային խնամքի ծառայությունների համակարգերի մասնակցային ինքնագնահատումներից հետո, վերջին 1 տարում MEASURE Evaluation-ը հետևել է յուրաքանչյուր երկրում ներկայացված առաջարկությունների իրականացման գործընթացին: Ծրագիրը շարունակում է արձանագրել գնահատման արդյունքում ստացված առաջարկություններին հետևելու և վերջիններիս կիրարկման դեպքեր:

Ստորև ներկայացված է գնահատումից հետո յուրաքանչյուր երկրում մինչ օրս իրականացված գործողությունները և գրանցած առաջընթացի ամփոփ նկարագրությունը

Ուգանդա՝ Հետևելով գնահատման շրջանակներում ստացված առաջարկություններին, «Երեխաներին պահել առողջ և պաշտպանող ընտանիքներում» (KCHPF) ծրագիրը, որը աջակցություն է ստանում ԱՄՆ ՄԶԳ-ի Տեղահանված և ծնողազուրկ երեխաների հիմնադրամի կողմից, գլխավորեց երեխաների խնամքի չարտոնագրված կենտրոնների (UCHs) փակման ճանապարհային քարտեզի մշակման գործընթացը: Երեխաների խնամքի չարտոնագրված կենտրոնների փակմանն ուղղված ուցեցույցը դեռ մշակման փուլում է:

Ուգանդայի շուրջօրյա խնամքի հաստատությունում տվյալների հավաքագրման և կառավարման գործընթացի վերանայում: Լուսանկար Իսմայել Դդումբա-Նյանզի, MEASURE Evaluation

Հանդիպում «Առավոտ» ՀԿ-ում Վանաձոր, Հայաստան Լուսանկար՝Հասմիկ Ղուկասյան, MEASURE Evaluation

Ուղեցույցի նպատակն է գործնական և գործառնական ուղղորդում տրամադրել երեխաների խնամքի չարտոնագրված կենտրոնների փակման գործընթացի վերաբերյալ, որպեսզի նվազագույնի հասցվի վնասի գործոնը և դրական արդյունք ապահովվի երեխաների համար:

Երկրորդ, ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի աջակցությամբ Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությունը նախաձեռնեց Այլընտրանքային խնամքի ազգային շրջանակը (NFAC) վերանայելու գործընթաց, որը կարտացոլի հետևյալը՝

- ՄԱԿ-ի «Երեխայի այլընտրանքային խնամքի մասին» ուղեցույցում և նմանատիպ այլ փաստաթղթերում ներառված ուղղորդող սկզբունքները,
- Ուգանդայում երեխաների այլընտրանքային խնամքին և պաշտպանությանը վերաբերող քաղաքականության և իրավական դաշտի վերջին փոփոխությունները (Ներառյալ փոփոխությունը Երեխաների մասին օրենքի, 59-րդ գլխում)
- Վկայող փաստեր երեխաներին առողջ և պաշտպանող ընտանիքներում պահելու, ընտանիքներում վերաինտեգրելու, ինչպես նաև ընտանիքներում պատշաճ այլընտրանքային խնամք ապահովելու վերաբերյալ
- Համաշխարհային և տեղական լավագույն փորձը և ստանդարտները

KCHPF ծրագիրը առաջնորդունում է նաև Այլընտրանքային խնամքի ազգային ծրագրի 5-ամյա պլանի մշակման աշխատանքները, որը կներկայացվի կառավարությանը վերանայված Այլընտրանքային խնամքի ազգային շրջանակի (NFAC) հետ միասին: Քանի որ այն գլխավորում էր երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի ազգային բարեփոխումների գնահատման գործընթացը, MEASURE Evaluation-ը ընդգրկվեց տեխնիկական աշխատանքային խմբում Այլընտրանքային խնամքի ազգային շրջանակը (NFAC) և դրան վերաբերող գործողությունների պլանը վերանայելու համար: Այլընտրանքային խնամքի ազգային շրջանակի (NFAC) վերանայումը մասնակցային գնահատման առաջարկություններից մեկն էր: Ծրագիրը իր ներդրումը կունենա գործողությունների ծրագրի ՄԳ բաժնում, որոնցից է օրինակ՝ այլընտրանքային խնամքի ընթացիկ մշտադիտարկման ցուցանիշների ներառումը:

Մոլդովա՝ Ի պատասխան սոցիալական աջակցության աշխատողների վերապատրաստման մեխանիզմները ինստիտուցիոնալացնելու ինքնագնահատման առաջարկությանը, Մոլդովան հաստատել է սոցիալական աջակցության ոլորտում աշխատող աշխատակազմի նախնական և շարունակական վերապատրաստման համակարգի կազմակերպման և իրականացման կանոնակարգը: Գնահատման բացահայտումներից մեկը այն էր, որ երկրում գոյություն ունի ընտանեկան աջակցության ծառայությունների անհավասար զարգացում, ուստի Առողջապահության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարություն ներկայացվեց առաջարկություն ստեղծել սոցիալական ծառայությունների նվազագույն փաթեթ, որը կֆինանսավորվի պետության կողմից: Կառավարությունը ընդունեց թիվ 800/1.08.2018 որոշումը և հաստատեց սոցիալական ծառայությունների նվազագույն

Սոցիալական ապահովության վարչություն և ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամ, Գործողությունների պլանավորման աշխատանքային հանդիպում,Գանա. Լուսանկար՝Մարի Հիքման, MEASURE Evaluation.

փաթեթը, որը ներառում էր 2 ծառայություն կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների համար՝ աջակցություն երեխաներ ունեցող ընտանիքներին և անհատական օգնություն հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Մոլդովայի բոլոր շրջանները այժմ ունեն ընտանեկան աջակցության ծառայություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն բաժանման կանխարգելման և վերաինտեգրման համար: Ի պատասխան ոչ ֆորմալ խնամքի ժամանակ երեխաների պատշաճ պաշտպանության ապահովման վերաբերյալ առաջարկության, Մոլդովան մշակում է օրենսդրություն, որի շնորհիվ աջակցություն կտրամադրվի ոչ ֆորմալ խնամակալության ներքո գտնվող երեխաներին և նրանց խնամակալներին:

Հայաստան՝ Երեխաների այլընտրանքային խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մասնակցային գնահատման արդյունքները շարունակվում են կյանքի կոչվել: Արդարադատության նախարարության ներկայացուցիչը արձանագրել է, որ նախարարությունից, ՀԿ-ներից և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից մասնակցային ինքնագնահատման մասնակիցներից ձևավորված աշխատանքային խումբը նախաձեռնել է շահերի պաշտպանության քաղաքականության, որի նպատակն էր ստեղծել երեխաների պաշտպանության մասնագետների հաստիքներ համայնքային մակարդակում:

Այս քարոզարշավը նպատակ ուներ բարելավել աջակցության ցուցաբերումը բաժանության ռիսկի տակ գտնվող ընտանիքներին: Այս նախաձեռնությունը ուղղակիորեն բխում էր Հայաստանի ինքնագնահատման զեկույցում տեղ գտած առաջարկություններից: Գնահատման մասնակիցներից տիկին Մարգարիտա Շահվերդյանը՝ «Առավոտ» ՀԿ-ի նախագահ և Վանաձորի մանկավարժական համալսարանի դասախոս, ներառել է գնահատման գործիքը և մեթոդը երիտասարդ սոցիոլոգների համար նախատեսված իր դասընթացի մոդուլում, որպես միջազգային լավագույն փորձի հաջողված հարմարեցում երկրի կոնտեքստին:

Գանա՝2018թ. դեկտեմբերին ինքնագնահատման բացահայտումները օգտագործվեցին Դոդովայում կազմակերպված գործողությունների պլանավորման աշխատաժողովի ժամանակ: Այդ հանդիպման նպատակն էր մշակել առաջնահերթ առաջարկություններ և գործողությունների ծրագիր, որը կներկայացնի համակարգի բոլոր բաղադրիչները: Աշխատաժողովին մասնակցեցին 20 մասնակիցներ Գենդերի, երեխաների և սոցիալական պաշտպանության նախարարությունից, Սոցիալական ապահովության վարչությունից (ՍԱՎ), ԱՄՆ ՄԶԳ/Գանայի գրասենյակից, ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամից և Գանայի համալսարանից:

MEASURE Evaluation-ը կաշխատի Սոցիալական ապահովության վարչության հետ գործողությունների ծրագիրն ավարտին հասցնելու համար և 2019թ. սկզբին շրջանառության մեջ կդնի այն: Այն կլինի Գանայում այլընտրանքային խնամքի համակարգի զարգացմանն ուղղված առաջին ազգային գործողությունների ծրագիրը: MEASURE Evaluation-ը կաջակցի նաև Սոցիալական ապահովության վարչությանը՝ հետևելու գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացին հաջորդ տարվա ընթացքում:

Կարողությունների զարգացում մշտադիտարկման և գնահատման ոլորտում

MEASURE Evaluation շարունակում է զարգացնել այլընտրանքային խնամքի ոլորտում աշխատող

Տվյալների վիզուալացման խումբը աշխատում է ՏՊՕ և վիզուալացման դասընթացի ժամանակ, Հայաստան Լուսանկար՝ Հասմիկ Ղուկասյան MEASUREEvaluation.

պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի ՄԳ կարողությունները: Ստորև ներկայացված է յուրաքանչյուր երկրի վերաբերյալ տեղեկատվություն.

Ուգանդա՝ 2018թ. նոյեմբերին MEASURE Evaluation-ը և Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությունը միասին համախմբեցին ազգային մակարդակում շահագրգիռ կողմերին՝ Ուգանդայում այլընտրանքային խնամքի վերաբերյալ տվյալների հոսքը, կառավարումը և որակը վերանայելու համար: Նախարարության և MEASURE Evaluation-ի աշխատողներից բաղկացած թիմը այցելություններ կատարեց 3 շրջաններ և հարցազրույցներ վարեց շուրջօրյա խնամքի հաստատությունների շահագրգիռ կողմերի, պրոբացիայի և սոցիալական ապահովության տարածքային աշխատակիցների հետ՝ վերանայելու այլընտրանքային խնամքի տվյալների ընթացիկ հավաքագրման, կառավարման և զեկուցման գործիքները և ընթացակարգերը: Դաշտային այցելությունների բացահայտումները ցույց տվեցին, որ գոյություն ունեն որակական տարբերություններ շուրջօրյա խնամքի հաստատություններում պահվող անհատական գործերում, առկա են ոչ հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր այլընտրանքային խնամքի վերաբերյալ զեկուցվող տվյալների համար, խնամատարության և որդեգրման ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության պահանջարկի պակաս և տվյալների վերանայման և մեկնաբանման նպատակով շատ հազվադեպ հանդիպումներ:

Հիմնվելով դաշտային այցելություններից ստացված առաջարկությունների վրա՝ MEASURE Evaluation-ը ներկայումս աջակցում է Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը հետևյալ գործողություններում՝

- Վերանայել և ստանդարտացնել տվյալների հավաքագրման գործիքակազմը այլընտրանքային խնամք տրամադրող տարբեր ծառայություններից: Գործիքները ներառում են երեխայի խնամքի վերաբերյալ տվյալները (նախնական տվյալներ), վեց ամիսը մեկ տունայցերի վերաբերյալ ներկայցվող հաշվետվությունը և խնամատարության տրված երեխայի դեպքի վերաբերյալ տվյալներ:

- Բարելավել հաշվետվության ձևաչափերը (օրինակ՝ տունայցերի վերաբերյալ վեց ամիսը մեկ ներկայցվող հաշվետվությունը), և մշակել ստանդարտ եռամսյակային հաշվետվության ձևեր պրոբացիայի և սոցիալական ծառայության աշխատողների համար՝ համայնքային զարգացման տարածքային գործակալին և Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը հաշվետվություններ ներկայացնելու համար:

- Մշակել ձեռնարկ այլընտրանքային խնամքի ընթացիկ մշտադիտարկման համար, ինչպես նաև ուղեցույց ցուցանիշների, տվյալների հավաքագրման, տվյալների հոսքի և որակի, տվյալների վերլուծության և զեկուցման ընթացակարգերի, տվյալների տարածման և կիրառման վերաբերյալ:

Առաջիկա ամիսներին կշարունակվեն կարողությունների հզորացման աշխատանքները, ինչը կներառի տվյալների որակի ապահովման (DQA) վերապատրաստման ծրագիրը և տվյալների որակի ապահովման գործընթացների վերաբերյալ դասընթացը դասընթացավարների



ՏՊՕ և վիզուալացման դասընթաց, Էրիկ Գրիս
MEASURE Evaluation ներկայացնում է ՏՊՕ դասընթացը
Հայաստանում Լուսանկար՝ Հասմիկ Ղուկասյան/
MEASURE Evaluation

համար: Մենք նույնպես նախատեսում ենք մշակել և իրականացնել տվյալների պահանջարկի և օգտագործման (DDU) վերաբերյալ դասընթաց և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ, աջակցել Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը կիրառելու Ուգանդայի շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների քարտեզագրման և հաշվառման հետազոտության տվյալները՝ իրականացնելով տվյալներից դեպի գործողություններ աշխատաժողովներ:

Մոլդովա՝ MEASURE Evaluation-ը 2018 թ սեպտեմբերի 27-28-ը իրականացրեց դաշտային այցելություններ Քուշենի և Սինգերեյի շրջաններ, որոնց ընթացքում կազմակերպվեցին աշխատաժողովներ համայնքային սոցիալական աշխատողների և շուրջօրյա խնամքի հաստատությունների անձնակազմի համար, կլոր սեղաններ որոշումներ կայացնողների հետ (օրինակ՝ քաղաքապետերի, շրջանների ավագանու անդամների և սոցիալական աջակցության վարչության պետերի հետ) և հարցազրույցներ շրջանների սոցիալական աջակցության և կրթության վարչության աշխատակիցների հետ: Շրջանների աշխատանքները աստիճանաբար տեղափոխվեցին MEASURE Evaluation համակարգումից դեպի ԱԱՍՊ նախարարության ոլորտային վարչություն՝ հիմվելով նախկինում մշակված համակարգման ուղեցույցների և MEASURE Evaluation-ի կողմից տեղում տրամադրվող մենթորական աջակցության վրա: Այդ դաշտային այցելությունների նպատակն էր հաստատել ցուցանիշների նախնական ցուցակը և ավելի լավ հասկանալ տվյալների հոսքը, տվյալների աղբյուրները, տվյալների որակը և տվյալների կիրառումը: 2018 թ. նոյեմբեր ամսին MEASURE Evaluation-ը ներգրավեց տեղացի խորհրդատու՝ լրացուցիչ դաշտային այցելություններ և հարցազրույցներ անց կացնելու համար Ֆալեսթի և Սորոկա շրջանների սոցիալական աջակցության և ընտանեկան պաշտպանության վարչությունների և Քիշնևի Երեխաների իրավունքների պաշտպանության քաղաքային վարչության հետ:
Դաշտային այցելությունների նպատակն էր՝ ստուգել առաջնային տվյալների աղբյուրների տեղեկատվությունը, մեթոդները և գրանցամատյանները համայնքային և շրջանային մակարդակներում և տվյալների հոսքերը , ինչպես նաև տեղեկացնել ցուցանիշների տեղեկաթերթերի մշակման և տվյալների որակի և կիրառման ուղեցույցերի մասին: Այս աշխատանքը օգնեց ԱԱՍՊ՝ նախարարությանը հասկանալ ազգային մակարդակով տարբեր տվյալների հոսքերի մասին և դրանց փաստաթղթավորման կարևորությունը՝ ապահովելու բարձր որակի տվյալներ: Այս աշխատանքը հնարավորություն տվեց՝ նաև հստակեցնել ընթացիկ մշտադիտարկման ցուցանիշները և մշակել 23 ցուցանիշների տեղեկաթերթերը:
Հետագայում, MEASURE Evaluation-ը կաջակցի ԱԱՍՊ նախարարության վարչությանը, բոլոր համաձայնեցված ցուցանիշների տեղեկաթերթերը լրամշակելու և կատարելագործելու հարցում՝ հիմվելով ՄԳ հիմական խմբի մի շարք աշխատանքային հանդիպումների արդյունքների վրա, որոնք տեղի են ունեցել 2019-ի փետրվար ամսին:

ԱԱՍՊ նախարարությունը՝ MEASURE Evaluation-ի հետ նախաձեռնեց հարցում 2018 թ,-ի մարտին, ապրիլին և հունիսին իրականացված դասընթացների

«Դաշտային այցելությունները բացահայտեցին այլընտրանքային խնամքի տվյալների կառավարման մի քանի բացթողումներ տարածքային մակարդակով: Առանց ունենալով համապատասխան գործիքներ և միջոցներ ճշգրիտ տվյալներ հավաքագրելու համար . . մենք նորից ու նորից՝ կանենք նույն բանը, և գիտեք ինչ է ասում Էյնշտեյնը՝ Մեզ համար դաշտային այցերը զարթոնքի ազդանշան դարձան: Անհրաժեշտ է անհապաղ զարգացնել կարողությունները այլընտրանքային խնամքի մեջ գտնվող երեխաների վերաբերյալ տվյալներ հավաքագրելու և զեկուցելու համար: Սա կարևոր է ապացույցների վրա հիմված ծառայությունների և քաղաքականության պատասխանների մշակման համար»: - Պրոբացիայի և սոցիալական ապահովության հարցերով գլխավոր պատասխանատու, Ուգանդա

Անուշ Ստեփանյան, Մանուկ տեղեկատվական համակարգի ադմինիստրատոր, իրականացնում է տվյալների որակի ստուգում Վանաձորի ցերեկային խնամքի կենտրոնի աշխատակցի հետ միասին Հայաստան. Լուսանկար՝ Հասմիկ Ղուկասյան, MEASURE Evaluation.

ու աշխատաժողովների մասնակիցների շչջանում գնահատեկու թե վեց ամիս անց ինչպես են օգտագործվել և որքանով օգտակար են եղել այդ դասընթացների տրամադրած գիտելիքներն ու հմտությունները մասնակիցների ընթացիկ աշխատանքում: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ դասընթացի մասնակիցները օգտագործել են ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները հետևյալ կերպ՝
(1) նախագծել և վերանայել են հետևյալ քաղաքականության փաստաթղթերի ՄԳ շրջանակը և համապատասխան ցուցանիշները՝ Մոլդովայի 2030 թ Ազգային զարգացման ռազմավարություն, Ծնողավարման հմտությունների և կարողությունների զարգացման միջգերատեսչական ռազմավարության իրականացման ազգային գործողությունների 2016-2022թթ ծրագիր, 2018-2019 ուսումնական հաստատություններում երեխաների,

«Մարզեր կատարած այցելությունները շատ արդյունավետ էին ինձ համար, քանի որ նրանք թույլ տվեցին, որ ես տեսնեմ խնամքի ծառայությունների բարեփոխումների իրական պատկերը մեկ այլ կողմից՝ այն դժվարություններն ու խնդիրները, որոնց հետ բախվում են մարզային և համայնքային սոցիալական աշխատողները և աշխատակիցները առօրյա աշխատանքում: Սա ավելի շատ վերաբերում է տվյալների հավաքագրմանը և տեղեկատվության մուտքագրմանը «Մանուկ» տեղեկատվական համակարգ, ինչպես նաև այդ տվյալների կիրառմանը: Բոլոր բացահայտումները հիմք ծառայեցին, որպեսզի ես նախաձեռնեմ փոփոխություններ իրավական ակտերում և նախագծեմ նոր իրավական ակտեր, որոնք կբարելավեն իրավիճակը»: - տկն. Լենա Հայրապետյան, Երեխաների հիմնահարցերի բաժնի պետ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

աշակերտների և ուսանողների անվտանգությունը ապահովող ճանապարհային քարտեզ և գործողությունների ծրագիր, Անչափահասների հանցագործության կանխարգելման ծրագիր, 2018-2020 թթ. հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր առողջապահության և

«MEASURE Evaluation ծրագրի կողմից կազմակերպված մարզային այցելությունները շատ արդյունավետ էին ինձ համար, քանի որ դրանք բացահայտեցին այն դժվարություններն ու խնդիրները, որոնց առնչվում են մարզային աշխատողները «Մանուկ» տեղեկատվական համակարգի հետ աշխատելիս և երբեք չեն բարձրաձայնել ընթացիկ հանդիպումների ժամանակ: Այցելությունները նույնպես բացահայտեցին, որ բազայում մուտքագրված տվյալները միշտ չէ, որ համապատասխանում են թղթային տարբերակներին, և որ ինտերնետային թույլ կապը և հին համակարգիչները թույլ չեն տալիս, որ հաշվետվությունները լինեն բարձր որակի և ներկայացվեն ժամանակին, և այն դժվարությունը, որն ունի անձնակազմը տեղեկատվական համակարգում արդյունքների վերաբերյալ աղյուսակները դուրս բերելու և համակարգի տվյալների կիրառման հարցում: Ես վստահ եմ, որ այն քայլերը, որ մենք նախաձեռնեցինք այցելությունների ժամանակ և այցելություններից հետո կբարելավեն տվյալների որակը և կխթանեն տվյալների ավելի ակտիվ մուտքագրումը և կիրառումը: Ես շատ բարձր եմ գնահատում նման աջակցությունը և հույս ունեմ, որ այս ամենը ընդհանուր առմամբ կբարելավի երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի տվյալների և տեղեկատվության որակը»: – Անուշ Ստեփանյան/ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» ՍՕՏԻԿՀ «Մանուկ» տեղեկատվական համակարգի ադմինիստրատոր,

«Դեպքերի կառավարման երկարաժամկետ տեղեկատվական համակարգ» աշխատաժողով, MEASURE Evaluation, Գործընկերություն հանուն յուրաքանչյուր երեխայի, Լումոս, CCF, Մոլդովա. Լուսանկար՝ Կամելիա Խեորիե, MEASURE Evaulation.

առողջության ապահովագրության բնագավառներում, Առդիո-վիզուալ մեդիա ծառայությունների օրենսգիրք, «Սփյուռք 2025» ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագիր;
(2) բարելավել են հաշվետվությունների որակը՝ օրինակ՝ սոցիալական հաշվետվության, մոր և մանկան առողջության պահպանման վերաբերյալ հաշվետվության, անչափահասների հանցագործության կանխարգելման ծրագրի իրականացման մշտադիտարկման հաշվետվության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության 2018 թ գործողությունների հաշվետվության, Մոլդովայի Հանրապետության կողմից վավերացված Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացման մասին զեկույցի;

(3) իրականացրել են գոյություն ունեցող ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի ավելի արդյունավետ մշտադիտարկում; և

(4) բարելավել են տվյալների հավաքագրման գործընթացները, օրինակ՝ CER 103 և 103 A վիճակագրության զեկույցի ցուցանիշները; ՄԱԿ-ի կայուն զարգացման օրակարգի հետ կապված ազգային ցուցանիշների տվյալները:

Գանա՝ Գանան շարունակում է կիրառել ընթացիկ մշտադիտարկումը այլընտրանքային խնամքում: MEASURE Evaluation-ը իրականացրել է այցելություններ երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններ 2018 թ. սեպտեմբերին և գրանցել է բացահայտումները: 2018 թ. դեկտեմբերին DSW- ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աշխատակիցների հետ միասին, MEASURE Evaluation-ը օգտագործեց այդ այցելությունների արդյունքները՝ իրականացնելու ցուցանիշների սահմանումների, տվյալների հոսքի, տվյալների հավաքագրման գործիքների մասնակցային վերանայում և կարողությունների զարգացման հետագա քայլերը: Ծրագրի ՄԳ կարողությունների հզորացման աշխատանքները ներառված են մշակված գործողությունների ծրագրի նախագծում:

Ավելին, MEASURE Evaluation-ը աջակցում է սոցիալական ապահովության վարչությանը՝ մշակելու այլընտրանքային խնամքի ՄԳ ձեռնարկը, որը կտրամադրի ստանդարտ ուղեցույց ընթացիկ մշտադիտարկման ցուցանիշների, տվյալների հավաքագրման գործիքների, տվյալների հոսքի, տվյալների որակի և սոցիալական ապահովության վարչությանը և ՇԽՀ-ների կողմից տվյալների կիրառման համար: Նպատակն այն է, որպեսզի DSW- ի տարածքային և շրջանային գրասենյակները օգտագործեն ձեռնարկը որպես ընթացիկ մշտադիտարկման չափանիշների հղումային փաստաթուղթ և վերապատրաստեն ընտրված DSW- ի անձնակազմին ձեռնարկի կիրառության վերաբերյալ: Կարողությունների հզորացման հաջորդիվ աշխատանքները կօգնեն լրացնելու շահագրգիռ կողմերին ընթացիկ տվյալների տարածման բացթողումները, և լրացուցիչ մենթորություն DSW- ի համար՝ վերահսկելու տվյալների որակը և իրականացնելու եռամսյակային այցեր՝ աջակցության և վերահսկման համար:

Դաշտային այցելություններ՝ արձագանքներ

Բացի Ուգանդայի և Գանայի տարածքային այցերի իրականացումը, MEASURE Evaluation աջացել է նաև Մոլդովայում և Հայաստանում կատարված այցելություններին՝ առաջնորդվելով դաշտային այցելությունների ուղեցույցի վրա, որի նպատակն էր օգնել երկրների կառավարություններին իմանալ տվյալների հոսքի, տվյալների որակի և տվյալների օգտագործման մասին ենթազգային մակարդակում: Դաշտային այցելություններից քաղած դասերը օգնել են հասկանալ, թե որքան կարևոր է պարզել տվյալների հոսքը բոլոր շահագրգիռ կողմերի համար և ստուգել տվյալների որակը:

Ուգանդա. MEASURE Evaluation-ը շարունակում է աշխատել Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարության հետ՝ բարելավելու տվյալների որակը և ներկայացման գործընթացները ընթացիկ մշտադիտարկման

«Դեպքերի կառավարման երկարաժամկետ տեղեկատվական համակարգ» աշխատաժողովի մասնակիցներ, Մոլդովա
Լուսանկար՝ Կամելիա Խեորխե, MEASURE Evaluation.

համար՝ հիմնվելով 2018 թ. նոյեմբերին իրականացված դաշտային այցելությունների վրա: Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարության պրոբացիայի և սոցիալական ապահովության հարցերով գլխավոր պատասխանատուն կիսվել է դաշտային այցելությունների իր փորձով, որը ներկայցված է ստորև՝

Թիմը ներկայումս աշխատում է այս բացթողումները լուծելու ուղղությամբ և ստանդարտացնելու տվյալների հավաքագրման և զեկուցման գործիքները, ինչպես նաև նախագծում է այլընտրանքային խնամքի ընթացիկ վերահսկման ձեռնարկը:

Հայաստան՝ 2018 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին MEASURE Evaluation-ը 4 այցելություն է կատարել մարզեր և զարգացրել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարողությունները տվյալների որակական ստուգումն իրականացնելու և տվյալների կիրառման պրակտիկան բարելավելու համար: Մարզային այցելությունների ժամանակ իրականացված տվյալների որակի ստուգումները բացահայտեցին, որ մարզային աշխատողները հաշվետվություն ներկայացնելու և քաղաքականության որոշումներ ընդունելու համար չեն օգտագործում Մանուկ տեղեկատվական համակարգը, քանի որ նրանց չեն վերապատրաստել, թե ինչպես կարելի դուրս բերել արդյունքների վերաբերյալ աղյուսակները համակարգից: Մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի, ցերեկային խնամքի կենտրոնների և «Առավոտ» ՀԿ-ի աշխատակիցների հետ հանդիպումների ժամանակ «Մանուկ» տեղեկատվական համակարգի ադմինիստրատորը սովորեցրեց համակարգի կիրառողներին, թե ինչպես կարող են համակարգից դուրս բերել աղյուսակներ և հաշվետվություններ, որոնք կօգնեն մարզային մակարդակում որոշումների կայացմանը: Այցելությունների արդյունքում ներկայացված առաջարկությունները կուղղորդեն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների ծրագրերում հասցեագրել տվյալների որակի և տվյալների կիրառման բացերը:

Էլեկտրոնային լուծումներ՝ ընթացիկ աշխատանքը

2018 թ. ամռանը MEASURE Evaluation-ը մեկնարկեց այլընտրանքային խնամքին վերաբերող մի շարք վեբինարներ: Այս վեբինարները հարթակ են տրամադրում 4 երկրներին գիտելիքներ փոխանակելու, այլընտրանքային խնամքի ոլորտում գրանցած հաջողություններն ու մարտահրավերները բաց քննարկելու համար, ինչպես նաև ներկայացնելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումներին վերաբերող երկրի առանձնահատուկ օրինակներ: Հաշվի առնելով մասնակիցների ցուցաբերած հետաքրքրվածությունը, 2019 թ -ի հունվարին կազմակերպվեց 2-րդ վեբինարը, որի թեման էր Հայաստանի «Մանուկ» տեղեկատվական համակարգը և տվյալների որակի և կիրառման ուժեղ և թույլ կողմերը: Վեբինարը վարում էր Հայաստանի ԵՀԹ-ը:

Ստորև ներկայացվում են ևս մի քանի օրինակներ Մոլդովայից և Ուգանդայից՝

Մոլդովա՝ 2019 թ. Փետրվարին MEASURE Evaluation-ը կազմակերպեց սեմինար Դեպքերի կառավարման երկարաժամկետ տեղեկատվական համակարգի հայեցակարգի հաստատման նպատակով, որը կարող է արտացոլել ինչպես համակարգի կատարողականի, այնպես էլ երեխային վերաբերող ցուցանիշներ: Սեմինարի մասնակիցներն էին ԱԱՍՊՆ, վարչապետին կից գրասենյակի, ներքին գործերի նախարարության, վիճակագրության պետական գրասենյակի, 2 շրջանների՝ Սենգերեյի և Քուշենի, դերակատար ՀԿ-ների (P4EC, Լումոս,CCF/HHC և Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման ազգային կենտրոն), Մոլդովայի ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԱՄՆ ՄԶԳ առաքելության ներկայացուցիչներ:

Ուգանդա՝ 2018թ. հոկտեմբերին MEASURE Evaluation-ը իրականացրեց Երեխաների առաջին էլեկտրոնային համակարգի (CFS) պիլոտային շահագործման գնահատումը: Այն կառավարման տեղեկատվական համակարգ է, որը մշակվել է Both Ends Believing և Tyler Technologies ընկերությունների կողմից: Էլեկտրոնային

համակարգի նպատակն է՝ տեղեկատվություն տրամադրել կառավարությանը՝ երեխաներին շուրջօրյա խնամքի հաստատություններից դուրս բերելու և ընտանիքներում ապահով տեղավորման համար: Գնահատման արդյունքում ստացված բացահայտումներն ու առաջարկությունները տեղեկատվություն տրամադրեցին Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը, CFS տեղեկատվական համակարգի հնարավորությունների մասին՝ հասցեագրելու առաջնահերթ տեղեկատվական կարիքները Ուգանդայի այլընտրանքային խնամքի համար, տրամադրելու գաղտնիության արդյունավետ ստուգումներ և տեղեկատվական տեխնոլոգիայի ենթակառուցվածք, ռեսուրսներ և կարողություններ համակարգի համար: Գնահատման վերջնական զեկույցը կտրամադրվի Գենդերի, աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությանը և ոլորտի այլ շահագրգիռ կողմերին հաջորդ ամիս:

Աջակցություն այլ գլոբալ նախաձեռնություններին

Կենտրոնական մակարդակում MEASURE Evaluation-ի թիմը շարունակում է համագործակցել Ավելի լավ խնամք ցանցի (BCN) հետ: BSN-ի աշխատակազմը հարցազրույցներ է անցկացրել ծրագրի չորս երկրների ազգային խորհրդատուների՝ Կամելիա Խեորխեյի (Մոլդովա), Հասմիկ Ղուկասյանի (Հայաստան), Բաշիրու Ադամսի (Գանա) և Իսմայել Դդումբա-Նյանզիի(Ուգանդա) հետ՝ ավելի շատ տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուր երկրում ընթացող երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման մասին, տեղեկացնելու BSN-ի առցանց վերահսկման գործիքի մասին: MEASURE Evaluation-ը նույնպես աջակցեց վերջերս ֆինանսավորում ստացած «Փոխելով խնամքի մեր ձևը» նախաձեռնությանը, որն իրականացվում էր Կաթոլիկ Օգնության Ծառայության (CRS), Մաեսթրալ և Լումոս հիմադրամների կողմից: 2018թ. դեկտեմբերին MEASURE Evaluation-ի թիմի ղեկավարը ներկայացրեց այս չորս երկրներում օգտագործված մոտեցումը, և տեղեկացրեց Գվատեմալայում և Քենիայում առաջիկայում իրականացվող աշխատանքների մասին:

2018թ. նոյեմբերին Մարի Հիքմանը MEASURE Evaluation-ից Ամերիկյան Գնահատման Ասոցիացիայի համաժողովի ժամանակ ներկայացրեց շատ կարճ պրեզենտացիա (հակիրճ, արագ սլայդներով ներկայացում): Ներկայացման վերնագիրն էր՝ «Մասնակցային ինքնագնահատում. Ճշգրիտ և իրական ժամանակում բացահայտումների կիրառման հավասարակշռումը՝ բարելավելու երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները չորս երկրներում»: Ավելի քան 80 մարդ մասնակցեց ներկայացմանը:

MEASURE Evaluation-ը աշխատել է Հայաստանում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ՝ զարգացնելով նրանց կարողությունները այլընտրանքային խնամքի համակարգի ընթացիկ մշտադիտարկման 20 ցուցանիշներ մշակելու և այդ ցուցանիշների տեղեկաթերթերը կազմելու համար: Թիմը օգտվել է հետևյալ աղբյուրներից՝

Պատշաճ ներդրում՝ Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ինտեգրում 2015թ.-ից հետո տեղի ունեցող զարգացման շրջանակներում

(հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.soschildrensvillages.org/getmedia/8a36a9f5-

8a14-43ea-a80c-4f1d936d4f85/A-Solid-Investment-Integrating-Children-Into-Post-2015-Framework.pdf)

ՄԱԿ-ի երեխաների հիմադրամի ձեռնարկը ֆորմալ խնամքի տակ գտնվող երեխաների ցուցանիշների չափման համար (հասանելի է հետևյալ հղումով՝ https://resourcecentre.savethechildren.net/node/5016/pdf/5016.pdf)

MEASURE Evaluation-ի վերաբերյալ տեղեկատվության համար այցելեք՝ www.measureevaluation.org.

Երեխաների այլընտրանքային խնամքի վերաբերյալ տեղեկատվության համար այցելեք՝ https://www.measureevaluation.org/our-work/youth-and-adolescents/alternative-care/alternative-care-for-children

Սույն հրատարակությունը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ MEASURE Evaluation-ի հետ թիվ AID-OAA-L-14-00004 համագործակցության պայմանագրի շրջանակներում: MEASURE Evaluation-ը իրականացվում է Կարոլինայի Բնակչության Կենտրոնի, Չափել Հիլի Հյուսիսային Կարոլինայի Համալսարանի հետ համագործակցությամբ ԱՅ ՍԻ ԷՖ Միջազգային կենտրոնի, Ջոն Մնոու ինք-ի, Հանուն Առողջության Կառավարման Գիտությունների, Փալլադիումի և Թուլեյնի Համալսարանի հետ: Ներկայացված բոլոր տեսակետները պարտադիր չի որ համընկնեն ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետների հետ: FS-19-345